**ՆԱԽԱԳԻԾ**
**ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ**

**Կ-011$^{2}$-20.08.2021-ՏՀ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1, 9.2, 9.3, 9.4 և 9.5 կետերով.

| | | |
|---|---|---|
| 9.1) | Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ՝ սույն մասի 9.2, 9.3, 9.4 և 9.5 կետերով նախատեսված դեպքերի՝ | գնման գնի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից |
| 9.2) | «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| 9.3) | «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 60-ապատիկի չափով |
| 9.4) | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ | բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 9.5) | Գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝ | բազային տուրքի 30-ապատիկի չափով |

»:

2) 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժբ», «ժգ», «ժդ», «ժե» և «ժզ» ենթակետերով.

| | | |
|---|---|---|
| ժբ. | Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված | գնման գնի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային |

| | | |
|---|---|---|
| | վճերով, բացառությամբ՝ սույն կետի «ժգ», «ժդ», «ժե» և «ժզ» ենթակետերով նախատեսված դեպքերի՝ | տուրքի 10000-ապատիկից |
| ժգ. | «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վճերով՝ | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| ժդ. | «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վճերով՝ | բազային տուրքի 90-ապատիկի չափով |
| ժե. | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վճերով՝ | բազային տուրքի 75-ապատիկի չափով |
| ժզ. | Գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վճերով՝ | բազային տուրքի 60-ապատիկի չափով |

»:

3) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժա», «ժբ», «ժգ», «ժդ» և «ժե» ենթակետերով.

| | | |
|---|---|---|
| ժա. | Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վճերով, բացառությամբ՝ սույն կետի «ժբ», «ժգ», «ժդ» և «ժե» ենթակետերով նախատեսված դեպքերի՝ | գնման գնի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից |
| ժբ. | «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վճերով՝ | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| ժգ. | «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վճերով՝ | բազային տուրքի 90-ապատիկի չափով |
| ժդ. | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վճերով՝ | բազային տուրքի 75-ապատիկի չափով |
| ժե. | Գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վճերով՝ | բազային տուրքի 60-ապատիկի չափով |

»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող չորրորդ ամսվա մեկից:

**ԼՐԱՄՇԱԿՎԱԾ**

**ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**
**««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ~~ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** ~~«~~«Պետական տուրքի մասին» ~~օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 19-ի ՀՕ-177-Ն օրենքի 1-ին հոդվածով լրացվող~~1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1, 9.2, 9.3, 9.4 և 9.5 -կետերով.

| | | |
|---|---|---|
| 9.1) | Հայաստանի Հանրապետության -քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ՝ սույն մասի 9.2, 9.3, 9.4 և 9.5~~-րդ~~ կետերով նախատեսված դեպքերի՝ | գնման գնի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից |
| 9.2) | «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի ~~2~~100-ապատիկի չափով |
| 9.3) | «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 60-ապատիկի չափով<br>»: |
| 9.4) | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ | բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 9.5) | Գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝ | բազային տուրքի ~~100~~ 30-ապատիկի չափով |

2) 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժբ», «ժգ», «ժդ», «ժե» և «ժզ» ենթակետերով.

| | | |
|---|---|---|
| ժբ. | Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ՝ սույն կետի «ժգ», «ժդ», «ժե» և «ժզ» | գնման գնի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի |

| | | |
|---|---|---|
| | ենթակետերով նախատեսված դեպքերի՝ | 10000-ապատիկից |
| ժգ. | «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 4200-ապատիկի չափով |
| ժդ. | «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 90-ապատիկի չափով |
| ժե. | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ | բազային տուրքի 75-ապատիկի չափով |
| ժզ. | Գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝ | բազային տուրքի ~~150~~60-ապատիկի չափով |

»:

3) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժա», «ժբ», «ժգ», «ժդ» և «ժե» ենթակետերով.

| | | |
|---|---|---|
| ժա. | Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ՝ սույն կետի «ժբ», «ժգ», «ժդ» և «ժե» ենթակետերով նախատեսված դեպքերի՝ | գնման գնի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից |
| ժբ. | «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 4200-ապատիկի չափով |
| ժգ. | «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 90-ապատիկի չափով |
| ժդ. | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ | բազային տուրքի 75-ապատիկի չափով |
| ժե. | Գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝ | բազային տուրքի ~~150~~60-ապատիկի չափով |

»:

**Հոդված 2.** ~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող չորրորդ ամսվա մեկից:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-011$^{2}$-20.08.2021,22.10.2021-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | Վերնագիր | Հանել «օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» բառերը | Ընդունվել է | Ընդունվել է |
| 2. | ՀՀ կառավարություն | Հոդված 1. | Շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը» | Ընդունվել է | Ընդունվել է |
| 3. | ՀՀ կառավարություն | Հոդված 1. կետ1 | Հոդված 1-ի 1-ին կետով լրացվող 9.1 կետում «կետերով» բառից առաջ հանել «րդ» հապավումը | Ընդունվել է | Ընդունվել է |
| 4. | ՀՀ կառավարություն | Հոդված 1. կետ1 | Հոդված 1-ի 1-ին կետով լրացվող 9.2 կետում «200» թիվը փոխարինել «100» թվով | Ընդունվել է | Ընդունվել է |
| 5. | ՀՀ կառավարություն | Հոդված 1. կետ 1 | Հոդված 1-ի 1-ին կետով լրացվող 9.5 կետում «100» թիվը փոխարինել «30» թվով | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | ՀՀ կառավարություն | Հոդված 1. կետ 2 | Հոդված 1-ի 2-րդ կետով լրացվող «ժգ» ենթակետում «400» թիվը փոխարինել «200» թվով | Ընդունվել է | Ընդունվել է |
| 7. | ՀՀ կառավարություն | Հոդված 1. կետ 2 | Հոդված 1-ի 2-րդ կետով լրացվող «ժգ» ենթակետում «150» թիվը փոխարինել «60» թվով | Ընդունվել է | Ընդունվել է |
| 8. | ՀՀ կառավարություն | Հոդված 1. կետ3 | Հոդված 1-ի 3-րդ կետով լրացվող «ժբ» ենթակետում «400» թիվը փոխարինել «200» թվով | Ընդունվել է | Ընդունվել է |
| 9. | ՀՀ կառավարություն | Հոդված 1.կետ 3 | Հոդված 1-ի 3-րդ կետով լրացվող «ժե» ենթակետում «150» թիվը փոխարինել «60» թվով | Ընդունվել է | Ընդունվել է |
| 10. | ՀՀ կառավարություն | Հոդված 2. | Շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող չորրորդ ամսվա մեկից» | Ընդունվել է | Ընդունվել է |
| 11. | ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն | | Նախագծերի փաթեթից հանել «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Կ-0112-20.08.2021,22.10.2021-ՏՀ-011/1)»Հայաստանի Հանրապետության օ րենքի նախագիծը: | Չի ընդունվել | Չի ընդունվել |